# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4 garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 388

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ (ՎԱՐԵԼԱՀՈՂ) ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ (ԱՅԳԻ) ՀՈՂԱՏԵՍՔՈՎ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կագի 7,8 և 9 կետերի և հիմք ընդունելով քաղաքացի Մխիթար Փիլիպոսյանի դիմումը՝

*որոշում եմ՝*

1. Գառնի համայնքում Մխիթար Ալբերտի Փիլիպոսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-021-0293-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.0911 հա ցածրարժեք վարելահողը փոխել բարձրարժեք հնդավոր այգի հողատեսքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ հունիսի 03
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 389

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ՝***

Գառնի համայնքում Հրածին Աբելյանին սեփականություն համարվող բնակավայրի նշանակության բնակավայրի կառուցապատման՝ ծածկագիր 07-021-0022-0007 0.1370հա հողամասին տրամադրել հասցե :
Գ.Գառնի 4-րդ թաղամաս 4-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 7:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ հունիսի 03
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 390

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է համասեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Լուիզա, Սոնա, Մանուշակ, Մյասնիկ և Գագիկ Հովհաննիսյանների կողմից փաստացի օգտագործվող 0.13266 հա հողամասի ծածկագիր 07-021-0058-0023 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ս. Պողոսյան

2022թ հունիսի 03
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 391

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂ ԳԱՌՆԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով, նույն որոշմամբ 11-րդ կետի ,, Զ ,, ենթակետի վերաբերյալ տվյալով ինչն է 2022 Տ8TV70 և հաշվի առնելով այն հանգամանքը, որ որ Լուիզա, Սոնա, Մանուշակ, Մյասնիկ և Գագիկ Հովհաննիսյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի 1-ին թաղամաս 4-րդ փողոց թիվ 9 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Լուիզա, Սոնա, Մանուշակ, Մյասնիկ և Գագիկ Հովհաննիսյանների համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1995թվականին կառուցված 153.7քմ շինությունները համարել օրինական:
2. Լուիզա, Սոնա, Մանուշակ, Մյասնիկ և Գագիկ Հովհաննիսյանների համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 2002 և 2010թվականներին ինքնակամ կառուցված. 111.15 քմ շինությունները ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան N 900105207212 հաշվին 111.15 քմ *1673 = 185955 դրամ
   1. Ընդամենը 185855 դրամ մուծելուց հետո

Համայնքի ղեկավար՝ Ս. Պողոսյան

2022թ հունիսի 03
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 392

### ՎԱՀԱԳՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Վահագն Ստեփանյանի և Արմինե Հայրապետյանի դիմումը, համաձայն << Ինքնակամ կառուցված շենքերի շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին >> 2002 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-ին կետի ա ենթակետի պահանջներով , նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վահագն Ստեփանյանի և Արմինե Հայրապետյանի հատկացված հողամասից՝ կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված, ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում , չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում , չի հակասում քաղաքաշինական նորմաներին , չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1.Ճանաչել Վահագն Ստեփանյանի և Արմինե Հայրապետյանի համասեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-021-0097-0010 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.21299հա մակերեսով բնակավայրի նշանակության տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում է որակավորում ստացած չափագրողի կողմից չափագրված, Գառնի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով :

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը կատարել գրանցում քաղաքացու սեփականություն համարվող հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցված վկայական:

Համայնքի ղեկավար Տ. Պողոսյան

2022թ հունիսի 07
գ.Գառնի

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 393

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 356 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ***որոշում եմ***՝

1. Գառնի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 24-ի <<Գառնի համայնք գյուղ Գողթ Խաղաղության հրապարակ 1-ին փակուղի 9 հասցեում Լունաչար Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փաստացի օգտագործման չափով ճանաչելու մասին>> N 356 որոշման <<1981>> թվերի փոխարեն կարդալ <<1970>> թվերը:
2. Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 07

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 394

## ԱՁ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Սամվել Հովհաննիսյանի հայտը անդորրագիր N 241 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ազատամարտիկների փողոց թիվ 1/11 հասցեում գործող ԱՁ Սամվել Հովհաննիսյանին տալ թույլտվություն 2022 թվականի հունիսի 01-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 07

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 395

## ԱՁ ԼՈՒՍԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով ԱՁ Լուսինե Նավասարդյանի հայտը անդորագիր N249 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի գ.Գողթ. Գեղարդի խճ. 9 փկղ. թիվ 6 հասցեում գործող ԱՁ Լուսինե Նավասարդյանին տալ թույլտվություն 2022թ. մայիսի 01-ից մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը հանրային սննդի կազմակերպման և իրացման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 07
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈւՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 396

## Ա/Ձ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով հիմք ընդունելով Ա/Ձ Հարություն Սարգսյանի հայտը անդորրագիր N 57890523 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրի 1-ին փողոց թիվ 27 հասցեում գործող Ա/Ձ Հարություն Սարգսյանին տալ թույլտվություն 2022թ. հունիսի 01-ից մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը արտաքին գովազդի տեղադրման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 07
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 397

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2022թ. բյուջեի նախահաշվում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. Հունիսի 07-ի

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7- Ի
N 397 ՈՐՈՇՄԱՆ

1.01.1.1. նախահաշվի 4251 հոդվածի 4-րդ եռամսյակից 177.5 հազ. ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1. նախահաշվի 4251 հոդվածի 2-րդ եռամսյակ:

2.01.6.1.նախահաշվի 5113հոդվածի 2-րդ եռամսյակից 350.0 հազ. ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1. նախահաշվի 5134 հոդվածի 2-րդ եռամսյակ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 398

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հաշվի առնելով անապահով քաղաքացիների դիմումները ***որոշում եմ***՝

Կոտայքի մարզի Գառնի համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն համաձայն հավելվածի :

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

2022թ. հունիսի 07

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի
N 398 ՈՐՈՇՄԱՆ

1. Շուրա Մկրտչյան 15000 դրամ
2. Նելլի Սևոյան 40000 դրամ
3. Կարինե Պապիկյան 20000 դրամ
4. Հրածին Աբելյան 20000 դրամ
5. Ավետիս Սուքիասյան 20000 դրամ
6. Ասյա Սարգսյան 15000 դրամ
7. Ալեքսեյ Գրիգորյան 15000 դրամ
8. Մայիս Անտոնյան 15000 դրամ
9. Շահեն Խաչատրյան 15000 դրամ
10. Սիրանուշ Սարգսյան 30000 դրամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» ՀՈւՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 399

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 275 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ

1Համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 26-ի «Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասին հասցե տրամադրելու վերաբերյալ համաձայն բաժանման սխեմայի» թիվ 275 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) Որոշմամբ նշված S=0.1200հա բառակապակցությունը փոխել S=0.12574հա բառակապակցությամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 07

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ
«08» ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 400

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշման 4-րդ կետի <<ե>> ենթակետի ՝ *որոշում եմ*՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը և հավելվածները՝

Հավելված 1-Գառնի համայնքի Հիմնական ցուցանիշները քաղաքացիական պաշտպանության վիճակի 01.01.2022թ. դրությամբ
Հավելված 2-Գառնի համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի
Հավելված 3-Սխեմա Գառնի համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման , կապի և ազդարարման
Հավելված 4- Գառնի համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզություն պլան
Հավելված 5-Հաշվարկ Գառնի համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման
Հավելված 6-Հաշվարկ Գառնի համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման
Հավելված 7-Հաշվարկ Գառնի համայնքնի բնակչության պատսպարման
Հավելված 8-Հաշվարկ Գառնի համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների
Հավելված 9- Հաշվարկ կապի միջոցների
Հավելված 10- Հաշվարկ Գառնի համայնքի ինժեներական տեխնիկայի ապահովման

2.Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2020թվականի սեպտեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին >> N 204 որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. . հունիսի 08

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈւՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 401

### <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով հիմք ընդունելով <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ի հայտը անդորրագիր N 271 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի Ազատամարտիկների Խճուղի թիվ 5 հասցեում գործող <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2022թ,հունվարի 01-ից մինչև սույն թվականի Հունիսի 30-ը արտաքին գովազդի տեղադրման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 08
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի հմմայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 402

### <<ԲԱՇ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<ԲԱՇ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ի հայտը անդորրագիր N 270 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի Ազատամարտիկների խճուղի թիվ 5 հասցեում գործող <<ԲԱՇ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ին տալ թույլտվություն 2022 թվականի հունվարի 01-ից մինչև սույն թվականի հունիսի 30-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 08
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈւՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 403

## <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ի հայտը անդորրագիր N 272 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի Ազատամարտիկների Խճուղի թիվ 5 հասցեում գործող <<ԲԱՑ ԳԱՌՆԻ>> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2022թ, հունվարի 01-ից մինչև սույն թվականի հունիսի 30-ը հանրային սննդի կազմակերպման և իրացման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 08
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 404

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով ***որոշում եմ՝***

1. Արա Վարդանի Հաբեթյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գ. Նարեկացի փողոց թիվ 3 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տուն կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Վիրապ Կարապետյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արա Վարդանի Հաբեթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 08
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 405

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ***՝

Գառնի համայնքում համայնքային սեփականություն համարվող բնակավայրի նշանակության բնակավայրի այլ՝ ծածկագիր 07-022-0009-0004 0.0372հա հողամասին տրամադրել հասցե ։ Գառնի համայնք գյուղ Գեղադիր 3-րդ փողոց թիվ 1/1:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. հունիսի 08-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» ՀՈՒՆԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 406

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱԴԻՐ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն և Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու 2017թվականի օգոստոսի 08-ի թիվ 32-Ն որոշումով ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր գյուղի 3-րդ փողոց թիվ 1/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության իրավունքով պատկանող ծածկագիր 07-022-0009-0004-ից 0.0372 հա բնակավայրերի այլ հողամասի գործառնական նշանակության փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից

Համայնքի ղեկավար Տ. Պողոսյան

2022թ. հունիսի 08
գ.Գառնի